№ 21 ԹԷՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍ 19

1896

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԹԷՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍ 19 № 21

# ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակւում է ամեն չորեքշաբթի օրերը

Տարեկան գինն է Թէհրանում 12 ղրն. վեցամսեան 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղ. վեցամսեան 8 ղ. Ռուսաստան 3 րուբլի. վեցամսեան 2 րուբլի. Օտար երկիրները 8 ֆրանկ. վեցամսեան 5 ֆրանկ: Հասցէ Teheran Rédaction ASTGH-ARBVELAN

«ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆԻ» Խմբագրութիւնը բաց է ամեն օր բացի կիրակի եւ տօն օրերն:

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով. իւրաքանչիւր բառին 1 շահի:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դժոխքը մեր աչքի առաջն է. Հայկական հարց. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թէհրանից. Նամակ Համադանից. Նամակ Սալմաստից. Նամակ Եգիպտոսից. Նամակ խմբագրութեան. Հերքում. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Աստղ-Արեւելեանի պատասխան. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Դիլլոնի նամակը.

## ԴԺՈԽՔԸ ՄԵՐ ԱՉՔԻ ԱՌԱՋՆ Է

----

Յաճախ տեսնվում է որ, որեւէ քահանայ կամ կրօնական, եկեղեցու ճակատից իւր քաղաքակրթութեան աչք խառնում է հեռաւոր սարսափեցնող խօսքերը. այն արքայութիւն եւ դժոխքը որ Ամենակալը պատրաստել է մեզ համար եւ այլն.... այդ խօսքերովը նա ուզում է հաւատացնել ժողովրդին որ այդ երկու հակապատկեր յաւիտենական բնակարաններն անտեսանելի են եւ թէ մարդս մինչեւ չմեռնի չպիտի կարողանայ դրանցից եւ ոչ մէկը տեսնել.... Այս այդ հաւատ եւ համոզումը կարող են ունենալ, այլ քրիստոնեայ ազգեր, որոնք այսօր, ապրում են բարօրութեան, անդորրութեան եւ ապահովութեան արքայութեան մէջ եւ կարող են հաւատալ թէ այդպիսի մի քաղցր օրերից յետոյ թերեւս գոյութիւն ունենայ, դժոխք անունով մի այլ տեղ, պատժելու համար այն բոլորը, որ իրենց շնորհւած բարութիւնները ի չարս գործածեցին եւ նենգեցին իրենց բարերարին... Սակայն հայերիս համար չկայ անտեսանելի ոչ դժոխք եւ ոչ էլ արքայութիւն, այլ ամեն ինչ մեր ներկայիս մէջ է պարունակւած, անտեսանելի ոչինչ չկայ մեզ համար. որովհետեւ դժոխքն այսօր մեր աչքի առաջն է, դժոխքի մէջ ենք ապրում, չարչարւում եւ մեռնում, հետեւաբար դժոխքի հաւրին ճարակ եղող մի ժողովուրդի համար արքայութիւնն ինչպէս է կարող գոյութիւն ունենալ։

Ասեցինք թէ դժոխքը մեր աչքի առաջն է, եւ թող որ քահանաները եւ մեր այս խօսքին հակառակողներն առ ժամանակ մեզ հետ ա՛յ գնին հայրենիքի Էրզրում, Բիթլիս, Տրապիզոն, Էրզնկա, Վան, Մուշ, Խարբերդ, Ուրֆա, Կեսարիա եւ այլն եւ այլն նահանգները եւ տեսնեն թէ Բէեզզեբուղի 30,000-ից բաղկացած Դիւաւին հեծեալ խմբեր ու Օսմանեան սովալլուկ բաշիբոզուկներն ի՞նչեր են կատարում. այնտեղ պիտի տեսնեն թէ ինչպէս մեր հայրենեաց հիւսիսային դրախտի արքայանման անդաստանները ձայն ի ձեռս կրակի ահագին կոյտերն է խառնում, որ մեր արնակից անմեղ եղբայր եւ քոյրերն իրենց ամբողջ գոյքով եւ կենդանով հրոյ ճարակ դառնան. այնտեղ պիտի տեսնեն թէ ի՞նչպէս հիւսիսային արեւմտեան խաբեբայ պաշտպան Թագաւորուհին իւր գործակալներն է ցոյց տալիս, կրակի մէջ այրւող ժողովրդին, որի պաշտպանութեան համար նա ինքը կամայ կալեց Կիպրոսի դաշինը եւ ստորագրեց Բեռլինի դաշնաթուղթը. այնտեղ պիտի տեսնեն վերջապէս թէ ինչպէս արնաներկ բարեկենդաններ է սարքում մեր արեւմտեան մարդակուլ ոսկեղջիւրը... Նորանց համար երեւակայութիւնն իրականութեան պիտի փոխւի

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԴԻԼՈՆԻ ՆԱՄԱԿԸ

----

(Շարունակութիւն № 20-ից)

1892 Յուլիս ամսում, Անձէղ օգլու բալթալ անունով մի հեծեալ քիւրդ յարձակւում է գովանդող գիւղի (Խընուսի գաւառում) վրայ եւ Մ'ըխո անունով մի հայի 4 հատ եզը տանում է եւ քանի որ դեռ այդ թւականին հաստատուած չէր հայերի զենք չկրելու օրէնքը իւր վեց հարուածեանն ուղղում է քիւրդին, որ արդէն Մխոյին գնդակահար անելու վրա էր, այսպէս մէկ կողմից միւսն եւ միւս կողմից էլ քիւրդ աւազակն անշունչ գետին են փռւում: Որից յետոյ, ահա թէ ինչ է պատահում. նոյն գիւղի հայերից 19 հոգի որ եղելութիւնից երբէք տեղեկութիւն չունէին ձերբակալելով բանտն են դրւում. որ նորանց յայտնում են որ շատով պիտի ազատւին, եթէ այս ինչքան կաշառ տան կառավարութեանը 10 հոգին լցնելով կառավարութեան այդ անպատկառ պահանջն անմիջապէս ազատութիւն են ստանում իսկ միացածները, որ իրենց աղքատութեան պատճառաւ մերժել էին որեւէ կաշառ տալ, երկար ժամանակ բանտումը պահւեցին... Սակայն այս միջոցին քիւրդերից եւ ոչ մէկը պատժւեցաւ. ինչո՞ւ պիտի մահմետականը պատժւի հայ սպանելու համար առաւել եւս ինծ հետ եղող Համիդէի զօրականը, «այդ չլսւած բան է». բայց եթէ սպանւողի ազգական եւ ընտանիքը խառն պատժւում են, այն պատճառաւ է որ իրենց որը կամ այրի թողնող եղեռնագործի դէմ բողոքելու յանդգնութիւն են ցոյց տւել, այդ շատ օրինաւոր է ըստ մահմետականաց գաղափարին, թերեւս այն պատճառաւ որ այդ սովորութիւն է դառել...

1893-ի Օգոստոսին, Ջիբրանլի քիւրդերը յարձակւելով Կախկիկ գիւղի վրայ կողոպտեցին գիւղացիքը եւ Օհաննէս անունով մի վաճառական, իւր խանութի մէջ վիրաւորեցին, որ երկրորդ օրը Խնուսաբերդ եկթալով Գայմ-մը գամլին (կառավար) գանգատւեց. բայց խնդիրը (Օհաննէսը) անմիջապէս բանտարկուեցաւ իբրեւ զրպարտիչ» թէ ինչ տանջանքների ենթարկւեցաւ նա, այդ անտրւածն վայրումը աննկարագրելի է. սակայն ութն օրից յետոյ նորա ազգականները յաջողեցին վերջապէս մի քիւրդ բերել կառավարի ներկայութեանը որ վկայեց թէ Օհաննէսի գանգատը ճշմարիտ է, այսինքն թէ նա վիրաւորել է իւր նկարագրածին պէս. որից յետոյ բանտարկեալն ազատւեցաւ նա էլ 10 ոսկի կաշառ վճարելուց յետոյ.

Խոլատ Բող գիւղի ժողովուրդն ինծ անհաւատալի պատմութիւններ արեցին որ վերջերս քիւրդերը նրանց գլխին ինչեր էին բերել. ասում էին թէ այդ աւազակ քիւրդերն իրենց 23 եզ, 28 ձի, 60 կով եւ 20 ոչխարներն էին յափշտակել: մի թեթեւ դէպք որ այստեղ պատմեմ պիտի կարողանայ ընթերցողին, թիւրք կառավարութեան արդարադատութեան մասին մի գաղափար տալ. 1894-ի Մայիսին 12 հեծեալ համիդիէներ յարձակելով մեր գիւղի վրայ բռնեցին մեր Տէր Դաւիթ քահանային որին, խոստացան արձակել եթէ 6 տաճկաստանի ոսկի վճարէր իրենց խեղճ քահանէն պարտք առաւ այդ գումարը եւ վճարելով իւր բռնողներին ազատւեցաւ. այդ զօրքը հրացաններ պարպեցին եւ միւս գիւղացիքի վրայ, որոնք փախան եւ երկրորդ օրն Գիլբէգը գնաց հասան գալէ, որ կառավարութեանառաջ դնէ բոլոր եղելութիւնը եւ հալածւած գիւղացիքի գանգատը. սակայն խեղճին հայհոյելով անւանեցին սուտ ասան եւ զրպարտիչ եւ որ նոյն պատճառով բանտարկեցին անօգնական գանգատաւորին որը 40 օր բանդում ապրելուց յետոյ ազատ թողուեցաւ 7 Օսմ. ոսկի կաշառ տալուց յետոյ:

Յափշտակւած ապրանքի եւ ինչքի յետ ստանալ չկայ եւ ոչ մի հայի համար երբեք այդ կատարւում է մի մահմետականի ձեռքով:

Ոչ թէ, որով հետեւ կառավարու-

